# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ
# ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

04/03/2022

## ՈՐՈՇՈՒՄ N 35-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԵՐՔԻՆ ԽՆՁՈՐԵՍԿ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԲՆԱԿԵԼԻ ՏՆԵՐ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ «ՀԱՅԱՍՏԱՆ»ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ ՀՈՂԱՄԱՍ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՏՆԵՐԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, 57-րդ հոդվածի 2-րդ մասով, հիմք ընդունելով ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ, 63-րդ և 65-րդ հոդվածներով, Հայաստանի Հանարպետության Սյունիքի մարզի Գորիս համայքի ավագանու 2021 թվականի մարտի 25-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս խոշորացված համայնքը (Գորիս քաղաք, Վերիշեն, Ակներ, Հարթաշեն, Խնձորեսկ, Ներքին Խնձորեսկ, Քարահունջ, Որոտան, Աղբուլաղ, Ձորակ, Վանանդ, Շուռնուխ, Բարձրավան) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի «Սյունիք-2» համակցված տարածական պլանավորման փաստաթղթի նախագիծը( գոտևորման նախագծերը) հաստատելու մասին» թիվ 27-Ա որոշումը

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Տալ համաձայնություն Գորիս համայնքի Ներքին Խնձորեսկ բնակավայում 0.7500հա մակերեսով հողամասը անհատույց սեփականության իրավունքով (նվիրատվություն) օտարելու «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ Արցախից տեղահանված քաղաքացիների համար բնակելի տներ կառուցելու համար:
2. Հաստատել Ներքին Խնձորեսկ բնակավայում բնակելի տների կառուցապատման հատակագիծը՝ համաձայն հավելվածի:
3. Համայնքի ղեկավարի առաջին տեղակալին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:

Կողմ -15 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՂԱՋԱՆՅԱՆ ԱՐՏՅՈՄ

ԱՌՈՒՍՏԱՄՅԱՆ ՄԱՐԳԱՐԻՏ

ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ՄՀԵՐ

ԳԱԼՍՏՅԱՆ ԱՆԻ

ԴԻԼԱՆՉՅԱՆ ՀԵՐՄԻՆԵ

ԼԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀԱԿՈԲՅԱՆ ՄԱՐԻՆԵ

ՀՈՎՍԵՓՅԱՆ ՄԵՆՈՒԱ

ՄԱՃՈՒԿՅԱՆ ԴԱՎԻԹ

ՅՈԼՅԱՆ ԻՐԻՆԱ

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՀՐԱՄ

ՍՈՆՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ՏՈՌՈՅԱՆ ԱՐՏԱԿ

ՏՈՌՈՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ

ՕՐԴՅԱՆ ՆԱՐԵԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ** **ԱՐՏՅՈՄ ԱՂԱՋԱՆՅԱՆ**

2022թ. նոյեմբերի «04»
ք.Գորիս